# «Ժողովրդի համար ամենասրբազան բանը դա պետականությունն է»

Երեքշաբթի, 28 Մայիս 2013 | 15:13 Ներքաղաքական Տարածափը՝

Թեմաներ՝ Քաղաքականություն Ներքաղաքական

+1 Like 5

Այսօր մամուլի ասուլիսում ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Պետրոս Հովհաննիսյանը, զուգահեռներ ներկայացնելով Առաջին և Երրորդ հանրապետությունների միջև, ասաց, որ երկուսն էլ ստեղծվել են դժվարին պայմաններում, և մենք պետք է պատշաճ գնահատենք այն մարդկանց, ովքեր հանրապետության հռչակելու գործում իրենց վրա պատասխանատվություն էին վերցրել:

Պետրոս Հովհաննիսյանն ասաց, որ Առաջին Հանրապետության ղեկավարությունն իր մեջ ուժ գտավ վեր կանգնել կուսակցականությունից և մտածել ազգային գերխնդիրների մասին, իսկ Երրորդ հանրապետության որոշ լիդերներ դա չկարողացան անել: Ըստ նրա՝ մեր այսօրվա շատ խնդիրների շարունակական լինելը դրա հետևանքն է:

ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի փոխտնօրեն, պատմ. գիտ. թեկնածու Սիեր Հովհաննիսյանը կոչ արեց դասեր քաղել Առաջին Հանրապետության անկումից և լինել միասնական: Նա, անդրադառնալով արտաքին քաղաքականությանը, նշեց, որ մենք պետք է կարողանանք տարբերել իրական և թվացյալ դաշնակիցներին:

«Ժողովրդի համար ամենասրբազան բանը դա պետականությունն է: Ամենաոժբախտ ժողովուրդները՝ պետականությունից զուրկ ժողովուրդներն են, և մենք մեր պետականությունը ամեն ձևով պետք է պաշտպանենք»,-ասաց Պետրոս Հովհաննիսյանը և հորդորեց չշփոթել պետությունը իշխանության հետ, քանի որ դրանք տարբեր բաներ են:

Ըստ նրա՝ այսօր խայտառակ վիճակում է գտնվում մեր լեզվի նկատմամբ հարգանքի և երկրի վերաբերմունքը, ինչը չէր հանդուրժի Առաջին Հանրապետության ղեկավարությունը:

« Նախորդ Հաջորդ »